
**ԱՄԵՐԻԿԱՆ ԵՎ ՍԿԱՆԴԻՆԱՎՅԱՆ
ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՅԱՆՊԱՍՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

ԴԱՐԲԻՆՅԱՆ Ա. Ս.

Դեռևս XIX դարի առաջին քառորդից սկսած՝ ԱՄՆ-ն արտերկրում իրականացնում էր մարդասիրական քաղաքականություն: Արդեն XIX դ. 20-ական թվականներից առաջին ամերիկյան միսիոներները ժամանեցին Օսմանյան կայսրություն: Սկանդինավյան միսիոներների գործունեությունն այս տարածաշրջանում սկիզբ առավ համիդյան կոտորածներից հետո: Դանիական «Կանանց առաքելության աշխատողներ» («Kvindelige Missions Arbejdere», այսուհետ՝ ԿԱԱ) կազմակերպությունը (հիմնվել է 1900 թ.¹) առաջին միսիոներուհուն՝ Քրիստա Համերին, Օսմանյան կայսրություն ուղարկեց 1901 թ.²: Հետագայում ևս մի քանի միսիոներներ ժամանեցին հայերին օգնություն ցուցաբերելու Մեզրեում, Բիթլիսում, Վանում, Մալաթիայում, Խարբերդում, որտեղ ավելի վաղ արդեն հաստատվել էին ամերիկյան միսիոներները: Հենց այս շրջանից էլ սկիզբ առավ սկանդինավյան և ամերիկյան միսիոներների փոխգործակցությունը: Այս հարաբերությունները միանշանակ բնութագրելն այդքան էլ հեշտ չէր լինի, քանի որ համագործակցելով միասնական նպատակին ծառայելու համար՝ սկանդինավյան և ամերիկյան միսիոներները, այնուամենայնիվ, շատ հարցերի շուրջ համակարծիք չէին և ձգտում էին թելադրել խաղի իրենց կանոնները: Սկանդինավյան միսիոներների համար ավելի դժվար իրադրություն էր ստեղծվում. որքան էլ վերջիններս փորձում էին անկախ գործել, ֆինանսական դժվարություններն ի վերջո ստիպում էին կրկին դիմել ամերիկյան աջակցությանը:

Մարիա Յակոբսենը գործուղվեց Օսմանյան կայսրություն դանիական ԿԱԱ-ի կողմից: Վերջինս 1907 թ. ժամանեց Խարբերդ³, որտեղ արդեն գործում էր ամերիկյան միսիոներական առաքելությունը՝ իր ժամանակավոր հիվանդանոցով: Ժամանումից մեկ օր անց Մ. Յակոբսենն անցավ ակտիվ աշխատանքի: Մ. Յակոբսենը 1909 թ. տեղափոխվեց Մեզրեում նոր կառուցված հիվանդանոց⁴: Կարճ ժամանակում նա սովորեց հայերեն և իրեն նվիրեց մարդասիրական գործունեության՝ Խարբերդում: 1907 թ. բնակվելով Օսմանյան կայսրության

¹ «Կանանց առաքելության աշխատողներ» կազմակերպությունը հիմնվել էր Շվեդիայում 1894 թ., իսկ 1900 թ. ստեղծվեց նրա դանիական մասնաճյուղը:

² Հասկ, Պաշտօնական ամսագիր Կաթողիկոսության Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Թոչնոց Բոյն, մաս Ա., Ն. Օ. վրդ. Բախտիկեան, Անթիլիաս-Լիբանան, օգոստոս-սեպտեմբեր 1971, էջ 324:

³ Ազատեան Լ., Հայ որբերը Մեծ Եղեռնի, Լոս Անճելըս, 1995, էջ 182:

⁴ Խարբերդ և անոր ոսկեդէն դաշտը. Յուշամատեան ազգային-պատմական-մշակութային և ազգագրական, Նիւ Եորք, 1959, էջ 367:

տարածքում, Մարիա Յակոբսենը դարձավ հայ ժողովրդի դեմ իրագործված ցեղասպանության սկանառես վկան: Նա հսկայական մարդասիրական աշխատանք կատարեց՝ ապաստան տալով բազմաթիվ կարիքավորների և փրկելով հազարավոր հայ որբերի կյանք⁵:

Երբ 1917 թ. ԱՄՆ-ն մտավ Համաշխարհային պատերազմի մեջ, ամերիկյան միսիոներները ստիպված հեռացան Օսմանյան կայսրությունից: Իրադարձությունների նման ընթացքի մասին էր անհանգրստանում Կ. Պոլսում Դանիայի դիվանագիտական ներկայացուցիչ Կարլ Էլիս Վանդելը իր նամակում (1917 թ. ապրիլի 10)՝ ուղղված Դանիայի արտգործնախարար Էրիկ Սկավենիուսին. «Ամերիկացի-ների տրամադրած գումարների շնորհիվ է միայն հնարավոր դառնում որևէ օգնություն հասցնել քրիստոնյաներին, և եթե ամերիկյան հյուպատոսն ու ամերիկյան միսիոներները ստիպված լինեն լքել երկիրը, մնացյալ հայերն ամենայն հավանականությամբ սովամահ կլինեն...»⁶:

Ամերիկյան միսիոներները Խարբերդից մեկնելուց առաջ համաձայնության էին եկել գերմանական նպաստամատուց կազմակերպության (Deutsche Hilfsbund) հետ. ըստ այդմ, վերջինիս ղեկավար Յոհաննես Էհմանը մինչ այդ ամերիկյան միսիոներների իրականացրած աշխատանքը հանձնարարեց Մարիա Յակոբսենին⁷: Նա մնաց Խարբերդում՝ հիվանդանոցում աշխատելու և հոգալու որբերի համար: Այս աշխատանքն իրականացնելը հնարավոր դարձավ «Օտարերկրյա առաքելությունների լիազորների ամերիկյան խորհրդի»⁸ (American Board of Commissioners for Foreign Missions, հետայսու՝ Ամերիկյան խորհուրդ) ֆինանսական աջակցության շնորհիվ, որը ամսական 100.000 ԱՄՆ դոլար էր ուղարկում Յակոբսենին⁹: Ամերիկյան միսիոներուհի Բուր Պարմելը 1918 թ. ԿԱԱ-ի հայկական կոմիտեի անդամ Էլիս Բլենդելին ուղղված տպագիր նամակում գրում էր, որ իրենք՝

⁵ Մինչև Դանիա վերադառնալը Մ. Յակոբսենի փրկած որբերի թվի վերաբերյալ «Խարբերդ և անոթ ոսկեղեն դաշտը. Հուշամատենան ազգային-պատմական-մշակութային եւ ազգագրական» աշխատությունում (Նիւ Եորք, 1959, էջ 368) նշվում է 2000 թիվը, Կարեկին Դիքրանի հոդվածում նշվում է 3600 (Karekin Dickran, Maria Jacobsen and the Genocide in Armenia, 2004, <http://www.fredsakademiet.dk/library/karekin/ukmaria.htm>), նույն թիվը նշվում է նաև Ներսես Ծ. վրդ. Բախտիկեանի «Թռչնոց Բոյն» հոդվածի Գ. մասում (Հասկ, Պաշտօնական ամսագիր Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս-Լիբանան, մարտ-ապրիլ, 1972, էջ 113):

⁶ DK/RA-UM/Gruppeordnede sager 1909-1945. 139 N. 1, "Armenien", Danish diplomatic sources, 1917-04-10-DK-001. Translated by Matthias Bjørnlund. <http://www.armenocide.de/armenocide/ArmGenDE.nsf/%%AllDocs-en/1917-04-10-DK-001?OpenDocument>

⁷ Rigsarkivet (Danish National Archives), Kvindelige Missions Arbejdere(KMA), Arkivnr (Women Missionary Workers Archives), 10,360, pk. 42, "Armenier-Komitéen" (hand-written meeting protocols from the Armenian Committee of the Danish KMA), 1917.

⁸ Ամերիկյան խորհուրդը հիմնվել էր 1810 թ. արտերկրում ամերիկյան միսիոներների գործունեությունը համակարգված դարձնելու նպատակով: Ավելի մանրամասն տե՛ս Կ. Չոպուրիան Գ. H. The Armenian Evangelical Reformation. Causes and Effects, New York, 1972, p. 23.

⁹ Rigsarkivet (Danish National Archives), KMA Archives, 10.360, pk. 42, March 1918.

ամերիկացի միսիոներները, որ երկար ժամանակ աշխատել էին Օսմանյան կայսրությունում, լավ պատկերացնում էին տեղի իրավիճակը և հույս ունեին, որ

շուտով ի վիճակի կլինեին հասնել Խարբերդ և օգնել Մարիա Յակոբսենին: Վերջինս ապաստան էր ապահովել 400 երեխայի համար, և օրական 400-500 կարիքավորի սնունդ էր ստանում նրա շնորհիվ¹⁰: «Մենք մեծապես գնահատում ենք նրա կատարած աշխատանքը այս օրհասական պահին: Նա բազմաթիվ կյանքեր է փրկել...», - գրում է Պարմելը: Նամակում նշվում էր նաև այն մասին, որ Յակոբսենը առաջին իսկ առիթի դեպքում հանգստի հնարավորություն էր ստանալու և վերադառնալու էր Դանիա¹¹:

Պատերազմի ավարտից հետո՝ 1919 թ., ամերիկյան «Մերձավոր Արևելքի նպաստամատույց»¹² («Near East Relief», այսուհետ՝ Ամերիկյան նպաստամատույց) կազմակերպության աշխատակիցները վերադարձան Թուրքիա և ստանձնեցին տեղի բազմաթիվ կարիքավորների համար հոգ տանելու գործը, իսկ Ս. Յակոբսենը վերադարձավ Դանիա՝ զեկուցելու իր կատարած աշխատանքի մասին և բանախոսություններով ներկայացնելու Օսմանյան կայսրությունում քրիստոնյաների և մասնավորապես հայերի դրությունը:

Ս. Յակոբսենի գործունեությունը մասին քաջ հայտնի էր նաև ԱՄՆ-ում: Շուտով նրան հրավիրեցին Միացյալ Նահանգներ: Յոթ ամիս շարունակ ճամփորդելով՝ Ս. Յակոբսենը ներկայացրեց իր կատարած աշխատանքը Խարբերդում՝ հազարավոր հայ որբերի փրկելու ուղղությամբ¹³: Փաստորեն, նա իր ելույթներով նաև մասնակցեց Ամերիկյան նպաստամատույցի կողմից հայերի օգտին տարվող դրամահավաք քարոզչությանը¹⁴:

ԱՄՆ-ից Դանիա վերադառնալուց հետո Ս. Յակոբսենը տեղեկացավ, որ թուրքական կառավարության հալածանքները կայսրության մնացյալ հայերի նկատմամբ ավելի են սրվել, և ամերիկյան միսիոներներն ու Ամերիկյան նպաստամատույցը Թուրքիայից դուրս էին բերում որբերին՝ մի մասին տեղափոխելու Հունաստան և Արևելյան Հայաստան, մյուսներին էլ՝ Միքիա և Լիբանան: Մեկ տարվա ընթացքում Խարբերդի, Մալաթիայի և Դիարբեքի որբա

¹⁰ Jakobsen M. Diaries of a Danish Missionary, Harpoot, 1907-1919, Princeton, 2001, p. 207.

¹¹ Rigsarkivet (Danish National Archives), KMA Archives, 10.360, pk. 13, 1918.

¹² Ամերիկյան նպաստամատույցն սկսել էր իր գործունեությունը որպես «Հայկական նպաստամատույց կոմիտե» 1915 թ., 1919 թ. ԱՄՆ Կոնգրեսի հատուկ ակտով այն վերանվանվեց «Մերձավոր Արևելքի նպաստամատույց» և ստացավ տասնամյա գործունեության օժանդակություն: Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Barton J. L. Story of Near East Relief (1915-1930). An Interpretation, New York, 1930, p. 431.

¹³ ՀԱՄԿ, Պաշտօնական ամսագիր..., Թոշնոց Բոյն, մաս Դ., մայիս-հունիս, 1972, էջ 212:

¹⁴ Karekin Dickran, Maria Jacobsen and the Genocide in Armenia, 2004, <http://www.fredsa-kademiet.dk/library/karekin/ukmaria.htm>

նոցները փոխադրվեցին Միրիա, որտեղ որբերի թիվը հասավ 12.000-ի¹⁵: Լսելով այդքան մեծ թվով որբերի՝ Միրիա և Լիբանան տեղափոխելու մասին՝ Մ. Յակոբսենը 1922 թ. փորձեց վերադառնալ Մերձավոր Արևելք իր աշխատանքին: Եվ քանի որ միսիոներուհուն Թուրքիա մտնելու արտոնագիր չտրվեց, վերջինս որոշեց իր գործունեությունը շարունակել Լիբանանում:

Մ. Յակոբսենը և ԿԱԱ-ի մեկ այլ միսիոներուհի Կարեն Մարի Պետերսոնը ժամանեցին Բեյրութ 1922 թ. փետրվարին՝ աշխատելու Մերձավոր Արևելքի նպաստամատույցի Բեյրութի շրջանի տնօրեն Մքաֆիի և Ջրեյլի որբանոցի տնօրեն Ը. Թրնիսի ղեկավարության ներքո¹⁶: Առաջին մի քանի ամիսը երկու միսիոներուհիները զբաղված էին՝ նպաստամատույցի Ջրեյլի որբանոցի հայ որբուկների հետ զրուցելով և նրանց կենսագրությունները կազմելով: Պետերսոնը շարունակեց աշխատել այնտեղ մինչև 1926 թ., երբ տեղափոխվեց Բեյրութի գաղթականների ճամբարը, որտեղ գործում էին ԿԱԱ-ի հիվանդանոցը, ճաշարանը և այլն¹⁷:

Դանիական ԿԱԱ-ի միսիոներուհիները ի սկզբանե ձգտում էին իրենց սեփական որբանոցը բացել Լիբանանում և մյուս բոլոր կազմակերպություններից անկախ աշխատել: Սա կարելի է բացատրել այն հանգամանքով, որ նրանք անկախ գործելաձև էին նախընտրում և թեև հիանում էին այլ կառույցների և հատկապես Ամերիկյան նպաստամատույցի կատարած աշխատանքով և փորձով, այնուամենայնիվ, այնքան էլ չէին վստահում վերջինիս ոչ քարոզչական գործունեության արդյունավետությանը: Ուստիև Մ. Յակոբսենը, որն արդեն աշխատում էր Ջրեյլի ամերիկյան որբանոցում, սկսեց հարմար վայր փնտրել դանիական ԿԱԱ-ի որբանոց հիմնելու համար, որի տնօրենն ինքը՝ Մ. Յակոբսենն էր լինելու, և որտեղ տարվելու էր նաև քարոզչական որոշ աշխատանք: Այն պետք է լիներ իզական որբանոց, ինչպես Մեզրեի «Էմաուսը», և նախընտրելի էր, որ գործեր դանիական կամ սկանդինավյան հովանու ներքո: Բհարկե, սա նախընտրելի տարբերակ էր, սակայն իրականում առանց մի հզոր կառույցի աջակցության, որի դերում այս դեպքում հանդես էր գալու Ամերիկյան նպաստամատույցը, գրեթե անհնար կլիներ իրականություն դարձնել այդ ծրագիրը: Ուստի այն վերանայվեց հետագայում՝ համապատասխանեցվելով դանիական և ամերիկյան միասնական պահանջներին:

Ի վերջո 1922 թ. հուլիսին Մ. Յակոբսենը մի մեծ և հարմարավետ տուն գտավ Բեյրութի և Ջրեյլի միջև ընկած Զուք գյուղում: Մի քանի օր անց Կիլիկիայից որբանոց բերվեց 28 գաղթականներից բաղկացած որբուհիների առաջին խումբը՝ ցնցոտիներով, քաղցած և հիվանդ¹⁸: Երբ նրանք տեղ էին հասել, Մ. Յակոբսենը ոչինչ չունեի որբերի համար, սակայն կարճ ժամանակ անց Դանիայից հազուստ և սնունդ

¹⁵ Barton J. L., նշվ. աշխ., էջ 148:

¹⁶ Rigsarkivet (Danish National Archives), KMA Archives, 10.360, pk. 43 April 1921-December 1927.

¹⁷ Rigsarkivet (Danish National Archives), KMA Archives, 10.360, pk. 43 April 1921-December 1927.

¹⁸ Հասկ, Թոչնոց Բոյն, մաս Դ., մայիս-հունիս, 1972, էջ 216:

տրամադրվեց աղջիկներին: 1922 թ. Խարբերդից նույնպես բազմաթիվ գաղթականներ տեղափոխվեցին Միրիա և Լիբանան¹⁹: Երեխաների մի մասին էլ տեղավորեցին Չուքի որբանոցում. այժմ արդեն որբերի թիվը հասավ 100-ի²⁰: Այդ թիվը ևս աճեց, քանի որ Մեզրեից Չուք ժամանեց նաև «Էմաուսի» անձնակազմը սաների հետ և արժանացավ ջերմ ընդունելության: Եթե «Էմաուսի» փոքրիկները ապաստան էին ստանում Չուքի որբանոցում, ապա ավելի մեծերը աշխատանքի էին անցնում շրջակայքի հիվանդանոցներում և այլ որբանոցներում: Արդեն շուրջ 200 որբեր կային Չուքի որբանոցում, իսկ Ամերիկյան նպաստամատույցը շարունակում էր փոքր տարիքի որբեր ուղարկել Չուքի որբանոց, հատկապես նորածինների, ուլքեր առավել մանրակրկիտ խնամքի կարիք ունեին, և շուտով պարզվեց, որ որբանոցում այլևս տեղ չկա: Այլ հարցեր էլ առաջ եկան. հիգիենայի լուրջ խնդիր կար, ջրի մատակարարումը անկանոն էր, քանի որ որբանոցի շենքը հեռու էր աղբյուրներից, իսկ ջրհորները տապին անմիջապես ցամաքում էին²¹:

Չուքում 1923 թ. գարնանը արդեն շուրջ 400 որբեր էին ապաստանել²²: Մ. Յակոբսենը դիմեց գործնական քայլերի և Սայդայում մի դրուզ իշխանից շենք վարձակալեց հարմար գումարով: Կառույցը բարձունքի վրա էր՝ Միջերկրական ծովի ափին, ուներ գեղեցիկ տեսարան և լավ ջրամատակարարում²³: Այնտեղ շուտով սկսեց գործել նաև մանկապարտեզ, հացատուն, լվացքատուն, որտեղ հիմնականում աշխատում էին որբերը: Գործում էր նաև արհեստի դպրոց, որտեղ աղջիկները ասեղնագործություն, կարուձև էին սովորում ցեղասպանությունը վերապրած հայ այրիներից: Սայդայում հաստատված այս որբանոցը հետագայում արդեն դառնալու էր հայտնի «Թռչնոց բույնը»²⁴:

Ամերիկյան նպաստամատույցի կողմից Թուրքիայից դուրս բերած որբերի հոսքը դեպի դանիական որբանոցներ շարունակվում էր՝ ծանրաբեռնվածություն դնելով դանիական կազմակերպության վրա, որը ֆինանսական օգնության կարիք ուներ: Ինչպես նաև որոշակի խնդիրներ կային կապված այն հարցի հետ, թե ով էր պատասխանատու Մ. Յակոբսենի տնօրինած որբանոցի և ընդհանրապես դանիական ԿԱԱ-ի աշխատանքի համար՝ ամերիկացիները, թե՞ դանիացիները: Նշված խնդիրներին արագ լուծում տալու նպատակով 1924 թ. գարնանը Բեյրութ ժամանեց ԿԱԱ-ի նոր նախագահող բարոնուհի Օ. Շաֆալիցկի²⁵: Վերջինս Մ. Յակոբսենի և Կ. Պետերսոնի հետ խորհրդակցելուց հետո դիմեց Ամերիկյան նպաստամատույցի ներկայացուցիչ Բայարդ Դոջին: Երկու կազմակերպությունները եկան

¹⁹ Յուշամատեան Ճիպեյի ամերիկեան որբանոցի 1920-1925, Գ. Բանեան, Պեյրութ, 1969, էջ 49:

²⁰ Rigsarkivet (Danish National Archives), KMA Archives, 10.360, pk. 43, April 1921-December 1927.

²¹ Նույն տեղում:

²² Նույն տեղում:

²³ Հասկ, Թռչնոց Բոյն, մաս Ե., հուլիս-օգոստոս 1972 թ., էջ 216:

²⁴ Յուշամատեան Ճիպեյի ամերիկեան որբանոցի 1920-1925, էջ 51:

²⁵ Rigsarkivet (Danish National Archives), KMA Archives, 10.360, pk. 43, April 1921-December 1927.

համաձայնության. դանիական ԿԱԱ-ն հոգալու էր 400 որբերից 200-ի ծախսերը, իսկ մնացածինը՝ ամերիկյան կողմը: ԿԱԱ-ն վճարելու էր որբանոցի շենքի վարձակալության համար և վերահսկելու էր այն²⁶:

Մայրայի որբանոցի շենքի սեփականատեր դրուզների ընտանիքը 1928 թ. որոշեց վերադառնալ իրենց կալվածք²⁷: Միաժամանակ Ամերիկյան նպաստամատույցն սկսել էր դուրս գալ Լիբանանից, քանի որ արդեն սպառվել էին այս կազմակերպության գործունեության թե՛ ժամկետը, թե՛ միջոցները: Ուստի նույն թվականի ապրիլին ԿԱԱ-ն գնեց Ջրեյլում ամերիկյան որբանոցի շենքը 20.000 ԱՄՆ դոլարով²⁸: Այսպիսով, 1928 թ. ապրիլին Մայրայից Մ. Յակոբսենի «Թոչնոց բույնը» տեղափոխվեց Ջրեյլ և այսուհետ սկսեց գործել դանիական հովանու ներքո:

Այսպիսով ավարտվեց դանիական և ամերիկյան միսիոներների համագործակցության այս դրվագը, որի շնորհիվ բազմաթիվ որբացած հայ երեխաներին ապաստան տալու և սովից ու վերահաս մահից փրկելու հնարավորություն ստեղծվեց:

**ДЕЯТЕЛЬНОСТЬ АМЕРИКАНСКИХ И СКАНДИНАВСКИХ
ГУМАНИТАРНЫХ ОРГАНИЗАЦИЙ ПО ОКАЗАНИЮ ПОМОЩИ АРМЯНАМ**

ДАРБИНЯН А. С.

Резюме

Совместная деятельность американских и скандинавских организаций содействовала эффективности работ по оказанию помощи армянам с конца XIX века до первой четверти XX века.

Датское Женское миссионерское общество направило Марию Якобсен в Харберд в 1907 году, где она работала в качестве медсестры в небольшом временном американском госпитале и стала очевидцем армянской резни. Когда США вступили в Первую мировую войну и американские миссионеры и члены Комитета помощи Ближнему Востоку вынуждены были покинуть Турцию, Мария Якобсен была в числе тех миссионеров, которые оставались в Османской империи на протяжении всей войны, чтобы продолжить работу в американском госпитале и ухаживать за нуждающимися.

²⁶ Հասկ, Թոչնոց Բոյն, մաս Զ., մարտ-ապրիլ 1973 թ., էջ 97:

²⁷ Որպես որբանոց ծառայած այդ շինության հետագա ճակատագրի մասին ՀԱԱ-ի «Թոչնոց Բոյն» հոդվածի Զ մասում նշվում է, որ այն մինչև օրս էլ պատկանում է դրուզների հայտնի Ճոսփոլյաթ կոչվող ընտանիքին:

²⁸ Հասկ, Թոչնոց Բոյն, մաս Զ., մարտ-ապրիլ 1973 թ., էջ 100:

В 1922 году Мария Якобсен прибыла в Ливан, где в селении Зук она основала небольшой приют для сирот, который в дальнейшем был перенесен в Джбейл и получил название "Птичье гнездо". Приют для сирот финансировался в соответствии с соглашением, подписанным между Американским комитетом помощи Ближнему Востоку и Женским миссионерским обществом.

Отношения между членами американских и скандинавских организаций не были однозначными. Несмотря на общность цели у них возникали некоторые разногласия, однако их сотрудничество трудно переоценить, поскольку оно спасло десятки тысяч жизней во время геноцида и в последующие годы.